» Ստուգիւ բան մը չիպակսիր Ֆից–
ճէյմսի փառացը, որով հետև իրեն ներ-
բողեան կարդացողն եղած է երևելին
Լալանտ. լսենք թէ ինչպէս կը խօսի
այս գիտուն աստղաբաշխը օրագրի մը
մէջ։ « Երբոր Լա Շաբէլ հրատարա-
» կեց 1772ին իր Որովայնակոչութեան
» գիրքը, երկայն հատուած մը քաղե-
» լով անկից դրի Գիտնոց օրագրին
» Նոյեմբեր թուոյն և Իվերտէօնի Հա-
» մայնագիտութեանը մէջ։ Պ. Սէն–
» ժիլ, որ Սէն–ժերմէն–ան–Լէյի մէջ
» մանրավաճառ մին էր, ունէր այս կա-
» րողութիւնս, և ճեմարանին որոշեալ
» քննիչները վկայեցին որ ամենայնիւ
» կատարեալ եղած էր խաբէութիւնը՝
» ձայնին հեռաւորութեանը և ուղղու-
» թեանը նկատմամբ. սակայն երբոր
» գիտութեանց ճեմարանն եկաւ 1770ի
» դեկտեմբերի 22ին, հանդիսականք
» շատ զարմանք մը չցուցուցին, կամ
» առաջուընէ պատրաստուած ըլլալ-
» նուն համար, և կամ թէ Սէն–ժիլ
» վախկոտութեամբ շարժեցաւ։ Բայց
» երբոր ըսեցի Ֆից–ճէյմսը Ռոպերդսը-
» նի քով, տեսայ որ ամենաճիշդ էին
» ինչ որ կը պատմէր Լա Շաբէլ՝ Վան-
» ցալէն, Պրոտոյէն և ուրիշ հեղինակ-
» ներէ յիշուած որովայնախօսներու
» վրայ։ Տեսայ որ իմ քովս կեցած պա-
» տասխաններ կը հանէր կրակարանի
» մը խորէն, վառարանի մը ծայրէն, և
» ուրիշ որ և իցէ տեղէ սրահին կամարը-
» ձաւոր սենեկներուն. և բնաւ չտարա-
» կուսեցայ վերոյիշեալ գրուածքին մէջ
» եղած զարմանալի պատմութեանց
» վրայ։ Բայց Պ. Մանժէն որ նոյնպէս
» որովայնակոչ մին է, բացատրած է
» օդուն և բերնին մեքենականութիւնը
» որոնք հարկաւոր են այս եզական և
» դոյզնագիտ արուեստիս համար, զոր
» յանդէպս անուանած են արուեստ
» որովայնակոչութեան »։

« Ֆից–ճէյմս մեռաւ 1815ին Մոն-
մարդրի բլուրներուն վրայ Խազախնե-
րու ձեռքէն, այն օրը յորում շատ սու-
ղի նստաւ դաշնակից թագաւորաց մայ-
րաքաղաքին պատերը դիտելու զուար-
ճութիւնը, և սակայն չաղատեցաւ Բա-
ռիզ »։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊԱՐԱՆՈՑ

Վիրք, Ափխազք և Չերքէզք.

Այն լեռնոտ երկիրը որ Սև ծովէն մինչև 'ի Կասպից ծովը անընդհատ ձգուած է՝ կ'ըսուի Կովկասեան պարանոց. իր լեռնահովիտներուն մէջ հնագոյն ժամանակէ 'ի վեր կը բնակին անթիւ մանր ազգեր, որոնցմէ շատը բնիկ տեղացիք են, ոմանք ալ Ծնացորդք ասիական հրոսից, որոնք ժողովրդոց մեծ դաղթականութեան ատեն, երբ կրկին և կրկին կ'անցնէին Կովկաս լերանց անդիի կողմը՝ ասոնք ասդիի կողմը ընտրեցին իրենց բնակութեան տեղ։ Գրեթէ ամենքն ալ ունին իրենց առանձին լեզու՝ որոնց հնութիւնն ալ գրեթէ մարդկութեան ծագմանը չափ հին է։ Իրենց կերպարանացը վրայ կը նշմարուին Ասիոյ և Եւրոպիոյ գլխաւոր ազգաց նշանական գիծերը, որոնք առանձին նշանական բարք և բնոյթ ունենալնին կը յայտնեն։ Վաղեմի և յիշատակաց արժանի գրուածք, ինչպէս Ս. Գիրք, Պոռմիթէոսի այլաբանութիւնն և կամ առասպելն առ Ցոյնս, Արգոնաւորդաց հռչակաւոր արշաւանքն, և ուրիշ անհամար սկանտինաւեան ազգաց աւանդութիւնք, զմեզ 'ի Կովկաս կը տանին, և կը բռնադատեն որ հոն ալ փնտռենք այն կէտերէն մէկը՝ որոնցմէ մարդիկ ցրուեցան երկրագնտիս մէկ մեծ մասին վրայ։ Բայց այս նիւթս թէպէտ և կարևոր՝ զմեզ կրնայ շատ հեռացընել մեր նպատակէն։

Եօթը կովկասեան ազգաց մէջէն, վասն զի եօթն զանազան լեզուներ կը խօսին, առաջին կը համարուի Վրաց ազգը։ Ի Հայոց Վիրք անուանեալները յարևելեայց Կիւրճի և յեւրոպացւոց քիչ շատ նոյն անուամբ կը կոչուին։ Վիրք անուան ծագումը որոշ չենք գիտեր,

Զէրքէզ.

բայց Ցունաց և Լատինաց իվերի և ի-
պերի ըսածն ալ նոյն է. իսկ Կիւրճի
բառը կ'ելլէ Քուր այսինքն Կուր գե-
տոյն անունէն որ այս երկիրս կ'ոռոգա-
նէ։ Իսկ Վիրք զերենք Քարթլի կամ
Քարթուլի կ'անուանեն Հայկայ Քարթ-
լոս եղբօրը անունէն։

Վրաց աշխարհին մեղմ և առողջա-
ր կլիմայն, և անտառներն ու դաշ-
տագետինները՝ երկրին երեսաց միա-
կերպութիւնը կը վերցընեն. կովկա-
սեան պարանոցին մէջ ամենայն բե-
րոց առատութիւն կայ, միայն մարդ-
կութիւնը սակաւաւոր և պղերգ՝ բնու-
թեան պարգևներուն չհամապատաս-
խաներ։ Երբ չորութեան եղանակը կը

Մանկուկ.

սկսի, որ սովորաբար մայիսէն մինչև նոյեմբեր կը տևէ, վիրք կը սկսին իրենց երկիրը ջրոտել՝ և անհամեմատ առուելութեամբ իրենց աշխատանացը՝ կը վայելեն բնութեան ամենէն գեղեցիկ պտուղները։ Կը մշակեն ցորեան, եգիպտացորեան և կորեակ, ասոնցմէ աղ աւելի կանեփ և վուշ։ Ամենաքիչ հոգով գեղձենիները, ծիրանենիները, նշենիները, սերկևիլները, կեռասենիները, նռնենիները առաջ կու գան. այդիները հարուստ են աղնիւ տեսակներով և քանակով՝ և գինին մինչև Պարսկաստան կը ղրկեն։ Խնձորենեաց, տորոնի և բամբակի մշակութիւնը շատ անխնամ է. արտերը սեխերով և ձմե-

րուկներով ծածկուած կ'ըլլան եղանակին։ Եւ այս ամեն յաջողութիւն կայ, մինչդեռ մշակութիւնը տղայութեան մէջ է, մինչդեռ արօրի մը ամենէն քիչ վեց և կամ ութ զոյգ գոմէշ պէտք է լծել՝ արօրին ծանրութեան պատճառաւ։ փեթակ պահելու և մեղր ժողվելու կերպերնին գովելի է. ձիերը և բոլոր եղջիւրաւոր կենդանիք Եւրոպիոյ ամենէն գերազանց ցեղերուն կը հաւասարին մեծութեամբ ալ՝ գեղով ալ. դմակաւոր ոչխարաց բուրդը ազնիւ է։ Բարձրաբերձ և գեղեցիկ եղևինները և կաղնիները փտտած՝ գետին կը թաւալին, և Վրացիք զանոնք բանի չեն բերեր։

Վիրք ունին իրենց սեփհական լեզու և գիր, բայց շատ բան հայկականէն, շատ մ'ալ յունէն առած են. սրբազան այբուբեննին սուրբն Մեսրովպ գտած է Ե դարուն մէջ, թէպէտ բոլորգիրնին աւելի հին կը սեպեն իրենք. մեր հայերէնին թուով 38 տառ ունին որոնցմէ 29ը բաղաձայն են։ Վրաց գրականութեան ամենէն ծաղկեալ և փայլուն ժամանակն է ԺԱ դարուն կէսէն մինչև ԺԲին վերջը։ Ունի վիպասանութիւններ, ռամկական երգեր, և քան զամենն աւելի կրօնական գրքեր։ Յետ երկար ժամանակ խեղճութեանց մէջ մնալու ԺԸ դարը իրենց աւետաբեր եղաւ. դպրոցք, գրատունք և տպարանք հաստատուեցան 'ի Վրաստան. շատ գիրքեր 'ի գերմաներէնէ, 'ի ռուսերէնէ և 'ի գաղղիարենէ փոխուեցան 'ի լեզու վրաց. վերջապէս երբ Ռուսք մինչև Վրաստանի վրայ ալ տարածեցին իրենց բազուկը, մեծապէս ձեռնտու եղան վրաց նորածին ուսումնականութեան և յառաջադիմութեան։ Վիրք գիրենք Հայոց հետ մի և նոյն սկիզբէն կ'իջեցընեն, այսինքն 'ի Թորգոմայ։

Վիրք առ հասարակ գեղեցիկ են. բարեձև և արագաշարժ, սևաչեայ, սիգաճեմ, զինեսէր և զբօսասէր. հիւրասէրք՝ բայց ոչ բարեմարդիկ. որսորդութեան և զինուորութեան վարժ։ Սովորոյթնին պարսկականով խառն է, վասն զի ազնուականք Պարսից արքունիքը կը մեծնային և ժողովրդականք Պարսից արքայից թիկնապահք կ'ըլլային։ Վիրք ոչ երբէք անզէն կը պտըտին, ինչուան նաև դուրան տեղուանք ալ հրացանը և դաշոյնը քովերնին կը պահեն, մօտակայ լերանց սրիկաներէն իրենց անձը պաշտպանելու համար։

Անդադար պատերազմները և յեղափոխութիւնները աշխարհն ալ և բնիկ ժողովուրդն ալ թշուառ պայմանի մը մէջ ձգեր էին. ճանապարհորդել և վաճառականութիւն ընել՝ որ իրենց ոգին է, չէին կարող ընելու. կանայք, որոնց գեղեցկութիւնը շատ պակաս չէ քան զՉէրքէզուհեացը, թէպէտ և գունով ոչ անոնց պէս սպիտակ և դէմքով ոչ անոնց պէս աշխոյժ՝ օտարաց հետ ունեցած յաճախ հաղորդութեանց պատճառաւ, մեղկացած են։ Աղջկունք, տաճկական վարչութեան տակ, իրենց գեղեցկութեանը զոհ կ'ըլլային. բայց այս ամօթալի առևտուրը 1802էն 'ի վեր դադրեցաւ երբ Վրաստան Ռուսաց տէրութեան նահանգ մը եղաւ։ Շատ Վրացիք կէսը հողի մէջ թաղուած հիւղերու մէջ կը բնակին։ Կախէթ նահանգին մէջ ուր քաղաքակրթութիւնը յառաջացած և օր օրուան վրայ յառաջադիմելու հետ է, տանց պատերը կը շինուին ուռենւոյ ոստերէ՝ վանդակաձև շարած, որուն վրայ կովու քակորէ և կաւէ զանգեալ ծեփ մը կու տան, և երդն ալ եղէգներով կը ծածկեն. հինգ գրկաչափ երկայնութեամբ և չորս լայնութեամբ սենեակ մը ունի որուն դուռը պատուհան է միանգամայն. առաստաղ մը՝ տորոն և բամբակ չորցընելու համար. սենեկին մէջ պզտի ծակ մը կայ կրակարանի տեղ և վրան շղթայով կախուած մրոտած սան մը։ Գրեթէ ամեն գեղերու մէկմէկ աշտարակ ունին, որոնք Լէզկիներուն արշաւանաց առեն կանանց և տղայոց ապաստանարան կ'ըլլային։

Քանի որ թագաւորական ընտանիքը՝ զոր ոմանք Բագարատ անունով հրեայէ մը իջած կը սեպեն, ուրիշներն

ալ փառնաւաղ անունով պարսիկ իշխանէ մը՝ իրեն իրաւունքներէն չէր հրաժարած, Վրաստան վիճակական միապետութիւն[1] էր. զոր շատ իշխանազունները չկրցան միացընել և ոչ ալ կատարելագործել։ Իշխանազունք և ազնուականք առանձին դաս կը ձևացընէին. առաջինք հարկատուութենէ ազատ էին, բայց պատերազմի ժամանակ իրենց հպատակներովը թագաւորին հետ երթալու պարտաւորեալ։ Դատերը թագաւորէն կը քննուէին. իսկ ազնուականք թագաւորին ալ և իշխանաց ալ քանի մը հարկերու պարտաւորութիւն ունէին. թէպէտ և հիւղաբնակք, բայց իրենց հպարտութիւնը հաւասար էր իրենց աղքատութեանը և տգիտութեանը։ Ռամիկը բացարձակ և խիստ ծառայութեան դատապարտուած կը ծախուէր ալ, գրաւի ալ կը դրուէր անանոյ պէս։ Ամենայն զէնք կրելու հասակ ունեցող անձինք զինեալ էին. ամեն ազնուական ինքը կը հրամայէր իրեն ստրկաց, բայց գլուխը թագաւորէն կ'ընտրուէր։ Թագաւորին հաստը կը ձևանար'ի հինգերորդաց. հինգերորդ կ'առնէր այգեստաններէն, դաշտերէն և պարտէզներէն. դարձեալ վաճառաց ելից և մուտից համար դրուած հարկերէն, և հանքերէն՝ որ ամենաքիչ էին։

Իմերէթք, Կորիացիք, Մինկռէլք և ուրիշ քանի մը ժողովուրդներ ալ վրացի են ծագմամբ։ Մինկռէլք բոլորին մէջ ամենէն աւելի ծանօթք՝ այն երկիրը կը բնակին ուր երբեմն Կոդքիսացիք, անոնցմէ եաքն ալ հին Լազերը կը բնակէին։ Մինկռէլք գլուխնին թաղիքէ գըլխարկներ կը դնեն, ոտուընին մերկ կամ մորթի մէջ պլլած, վրանին շապիկ և աղտոտ զգեստներ. կանայք՝ նշանաւոր իրենց ցոփ և անառակ կեանքովը տըղաքը կը վարժեցընեն ստութեան, աւարառութեան և սրիկայութեան։ Ռուսաց տիրապետութենէն առաջ տէրը զծառայն կը ծախէր, հայրը իր որդին, եղբայրն ալ իր քոյրը։ Ազնուական Մըն. կռէլ մը գերիներ ստանալու համար՝ աչքը կորած թշնամին ձիէն վար ձգելը և մէջքը կապած գոտիով զանիկայ կապելը և տանելը մէկ կ'ընէր։

Աւելորդապաշտութիւնները կարգէ դուրս յաճախած են Մինկռէլաց քով. ինչ դարու քարոզիչք յետ մեծ աշխատութեանց չկրցան անհետ ընել մէջերնէն այն տօնը որ 'ի պատիւ կովու մը կը կատարեն, և որ Եգիպտացւոց Ապիսի պաշտօնը կը յիշեցնէ. Մինկռէլաց իշխանը Տատիան և կամ տէր Ծովուռ կ'ըսուի։ Ըստ անուանը՝ պէտք էր որ նաւեր ունենար, իսկ ինքը ձկնորսի նաւակ մ'ալ չունի. սովորաբար ուղեկիցներով տեղէ տեղ կը թափառէր և իր բանակը ցոփութեան և թշուառութեան տեղ էր։ Ազնուական Մինկռէլք սիրող են որսորդութեան, որսի թըռչուններ կ'ընտանեցունեն որոնք եղջերուաց հետ կը մաքառին։ Մինկռէլեան առած մը՝ աղէկ ձին, աղէկ շունը և աղէկ բաղէն մարդուս երջանկութեան համար ամենակարևոր կը սեպէ։ Որսորդութեամբ առատ մսեղէն կ'ամբարեն. սեղաններնուն վրայ տեղացի թըռչուններ և ինչուան փասիան կ'երևան։ Տաճիկք որ բազմաթիւ են Մինկռէլաց աշխարհը՝ յետին աստիճանի ատելութեամբ կը նային գինւոյն և խոզերուն առատութեան, և լաւ հացին քիչութեան վրայ։

Մինկռէլաց ինքնակաց տէրութիւնն կամ իշխանութիւնն ալ վերջացաւ այս տարւոյս սկիզբը. Տատիանն Ռուսաց կայսեր թողուց իր պետութիւնը. կայսրըն ալ իրեն եկամուտ կապելով՝ անուանեց զինքը և իր պայազատները Իշխան Մինկռելիոյ (Prince de Mingrélie).

Իմերէթք վրաց դրացի են. իրենց մասնաւոր ձևով գլխարկնին, երկայն ձգուած մազերնին, ածիլած կզակնին հիւսած պերևեշներով, զգեստնին որ ծնկուընները կը շոշափեն և ազդրներուն վրայ ծալք ծալք են, թամբերուն վրայի փակեղը և լայն գոտինին, քիչ շատ

1 Monarchie féodale.

նոր կերպարանք մը կու տան իրենց։ Իմերէթք կը բնակին ընդ երկայնութիւն գետոց և անտառաց։ Պաճարաց դարմանը, փեթակաց և շերամներունը՝ կարդէ դուրս կատարելութեան հասուցած են և առաջին կրնան ըսուիլ բոլոր Կովկասեան գաւառաց մէջ։ Մէկ որթոյ արմատ մը բովանդակ ընտանեաց մը դինի կը բաւեցընէ, բայց Իմերեթաց անհոգութեամբ երկրին ձիրքերն ալ կը կորսուին կլիմայինն ալ։

Ապազա կը բաժնուի 'ի Մեծ և 'ի Փոքր, փոքրը լեռնային գաւառաց մաս է, իսկ մեծը Մ'նկռելաց արևմտակողմը կ'իյնայ և կը հասնի Չերքէզներուն սահմանագլուխը։ Մեծն Ապազա թէպէտ և լեռնային, բայց վտակներուն առատութեան և երկրին պտղաբերութե՛ն խօսք չկայ. զարմանալի բան մ'է որ ամեն տեղ նոյն բնութիւնը՝ մարդկանց բնութեան վրայ նոյն ազդեցութիւնը չուներ։ Ապխազք բարբարոս են, թէ և մէկէն իրենց դիմաց վրայ բարբարոսութիւնն չկարդացուի. հաւկրթաձև երեսնին, քովերէն դլուխնին ճզմուած, կարճ կըզակնին, մեծ քթերնին, մութ շագանակագոյն մազերնին, ազգային և նշանական գծագրութիւն մը կը ձևացընէ։ Ցոյնք երբեմն Ասիէի անուամբ ճանչցան զիրենք, և իբրև զարհուրելի և խարդախ ծովու հէնք. Բիւզանդացւոցմէ Ապասնի անուամբ անարդ ժողովուրդ մը կը սեպուէին իրենց գերեվաճառութեան համար։ Չերքէզք օր մը Ապազայի իշխանները կը հրաւիրեն, և իրենց բարեկամութիւնը որսալէն ետքը՝ անոնց դլուխները կը կտրեն. այս դէպքէս և ժամանակէս ետքը Ապխազք այն պղտի քաղաքականութիւնն ալ կորսնցուցին զոր Կոստանդնուպօլսէն իրենց աշխարհը անցուցեր էին, վասն զի այս բանս քաղաքական պատերազմաց ծագելու պատճառ եղաւ։ — Իրենց կիրակի պահելնուն մէջ նախնի քրիստոնէութեան աղօտ հետքեր կ'երևան։ Ոմանք հանդարտաբարոյ՝ լաստենեաց կաղնեաց անտառներու մէջ թափառելով կ'անցընեն իրենց կեանքը, ոմանք ալ ողորմելի երկրագործութեամբ մը, ամենքն ալ աւարառութեանց սիրող մէկզմէկ գերեաց վաճառականներու կը ծախեն։

Ապխազաց լեզուն և սովորոյթքը Չերքէզներուն շատ կը մօտենայ, բայց ընդայլոց ծանօթ լեզուաց հետ ամենևին ազդակցութիւն չունի իրենցը. կը կարծեն թէ ըլլայ Ապխազաց աշխարհին մէջ արծաթի հանք, բայց ետևէ իյնող փորող չկայ. իրենց ամենէն մեծ շահուաղբիւրը նաւարկութիւն և որսորդութիւնն էր։

Ապխազաց վաճառականութեանն նիւթերն են ասուեայ և թաղիքէ մեկնոցներ, կուզի և աղուէսի մուշտակներ, մեղր, մոմ և տօսախի փայտ։ Ցաճիկ և հայ վաճառականները որոնք աղ և կերպաս կը մոցնեն Ապխազաց երկիրը, ամեն զգոյշ արթնութիւ՝ պէտք է որ իրենք զիրենք պաշտպանեն ուխտադրուժ բարբարոսաց յարձակմունքներէն, ապա թէ ոչ մերկ իրենց հայրենիքը կը դառնան. վասն զի Ապխազք բարեկամ՝ և բարեկամութիւն ոչ երբէք ունեցած են։

Կովկասեան պարանոցին մէջ ժողովրդոց մէջէն ամենէն նշանաւորը եթէ թուով, եթէ տարածութեամբ, եթէ պատմական արարուածներով և եթէ մեր օրերը եղած զինուորական դիպուածներով, Չերքէզաց ազգն էր. իսկ այսօրուան օրս այն ազգը սոսկ յիշատակ մը դարձաւ և ոչ ուրիշ բան։ Ցետ յամառաբար ընդդիմանալու Ռուսաց անխոնջ զինուցը դէմ, յետ գաղանային, արիւնահեղ և անոլորելի պատերազմներու դրեթէ կէս դար ամբողջ՝ Չերքէզի ցեղերը ճնշեալ, ոտնակոխ եղած, ոտն առ ոտն վռնտուած իրենց երկար ատեն անմատչելի եղած լեռներէն, վերջապէս չունենալով ոչ պաշտպանութիւն և ոչ ապաստանարան ճանչցան ռուսի իշխանութիւնը, ինչպէս քսան տարի առաջ Շամիլի և արևելեան Կովկասու ուրիշ ժողովուրդներ, և մեծ մասն թողուցին իրենց հայրենիքը. թէպէտ թշուառ և դժուարին ո-

րոշմունք, բայց չատերուն աւելի սիրելի սեպուեցաւ այս պքոտրեալ կեանքը քան թէ անկախութիւննին կորսնցունելէն ետքը՝ թէ և վայրենի անկախութիւն, Ռուսի հպատակիլը, 1864ին 300,000էն աւելի անձինք ընդ այր, ընդ կին և ընդ տղայ, ըսին իրենց մնաս բարովը իրենց հօրենական գերեզմանաց, զըրկեալ իրենց չէնքերէն, մերկացեալ ստացուածքներնէն, և տանելով իրենց հետ ցաւ և տառապանք: Չէրքէզք Մահմէտական կրօնիւք՝ Օսմանեան տէրութեան ապաւինեցան. և արդէն թշուառութեանց և հիւանդութեանց պատճառաւ քիչցած, մինչև տասն անգամի չափ, Եւրոպիոյ Տաճկաստանի և Անատօլուի ծովեզերքը սկսան բնակիլ:

Իբրև վերջին յիշատակ չիջեալ ժողովրդեան մը, որուն անունը ալ կովկասեան ազգագրութենէն աւրուած է, քիչ մ'ալ կանկ առնենք Չէրքէզաց վրայ: Այս ժողովուրդը երկար ժամանակ պարծանք կը սեպուէր կովկասայնոց. պատերազմականք իրենց նահատակութեանց համար կը յիշատակուէին, կանայք իրենց գեղեցկութեանը, և բովանդակ ազգը իր ազնուութեանը համար, որ իբրև ժառանգութիւն որդւոց և թոռանց կ'անցնէր նկարեալ իրենց դիմագրութեան, շարժման և բարուց մէջ: Իրենց ծննդեան տեղին էր Քուպան գետէն մինչև Սև ծով եղած միջոցը, և կը բնակէին հոն անյիշատակ ժամանակէ 'ի վեր: Սկիւլաքս իր շրջանաւութեան մէջ և Քրիստոսի թուականէն 500 տարի առաջ՝ Քէրքէդ յունացուցած անուամբ՝ կը յիշէ զանոնք:

Ինչպէս բոլոր նախնական ժողովրդոց՝ այսպէս Չէրքէզաց և ուրիշ բոլոր կովկասեան ազգաց մէջ ընկերական կազմութեան մը նեցուկը և կամ խարիսխը ցեղն էր: Չէրքէզաց ազգը կը բաժնուէր ութ գլխաւոր ցեղ. երկու զօրաւորները Բօղուշհաղ կամ Նաղուշխա և Շափսուղ կ'ըսուէին, որոնք Չէրքէզաց ցեղերուն Ռուսաց ետքի թշնամիները և ետքի ընկճեալները եղան. կը բնակէին ծովափնեայ գօտւոյն տակ. իսկ մէկալ վեց ցեղերը կը բնակէին, և կը բնակին մասամբ մինչև հիմայ, ծովեզերեայ լերանց գօտւոյն արևելակողմը՝ Քուպանի օժանդակներուն վրայ:

Ափխազք որոնց վրայօք քանի մը խօսք ըսինք առաջ՝ թէպէտ և ուրիշ ժողովուրդ՝ բայց եղբայր ալ կրնան ըսուիլ Չէրքէզաց. ամենքն ալ ձիաւոր կովկասու մեծ գօտւոյն վրայ, հայրենիքէն տարագրուելու թշուառ դատակնիքն իրենք ալ ունեցան Չէրքէզաց հետ մէկտեղ, բայց ինչ ստոիճանի, դեռ որոշ տեղեկութիւն չունինք: Ափխազք ալ Չէրքէզաց պէս ցեղ ցեղ կը բաժնուէին. ամենէն աւելի ծանօթագոյն էր Ուպիխք ըսուածը: Չէրքէզք և Ափխազք կը յիշուին հռովմէյական հեղինակաց մէջ շատ մը ցեղերու անուններով՝ ամենահին ժամանակէ 'ի վեր հաստատուած կովկասեան պարանոցին վրայ. և այս յիշատակութիւնս կերպով մը հաստատութիւն է Քէրքէթ բառին, զոր քիչ առաջ յիշատակեցինք, Չէրքէզին հետ մի և նոյն ըլլալուն. այս ցեղերուն դըծագրութեան մէջ կ'երևայ հնդկա-եւրոպական ազգաց նմանութիւն մը:

Ճանապարհորդք թէպէտ և քիչ, և ալ աւելի քիչ անոնք որոնք ուզեր են Չէրքէզ ազգը մօտէն և ուշի ուշով քննել և սորվիլ, զարմացման մէջ ընկըղմած մնացեր են՝ տեսնելով անոնց ներքին ընկերութեան հանգամանքները, որոնց մէջ նշանաւորագոյն էր ցեղերուն առանձին, որիշ որիշ խումբեր բաժնուիլն, որ կ'ըսուէին դլեուշ (tleouch) որ կը նշանակէ ազգ, սերունդ, և կամ եղբայրութիւն: Ցիրուցի մէկմէկ եղբայրութիւններ էին այս խումբերս. վասն զի իւրաքանչիւր խումբին անդամները իրարու եղբօր պէս կը նայէին, այնպէս որ արգելք ունէին մէջերնին ամուսնանալու, և պէտք էր որ ուրիշ եղբայրութեան մէջ իրենց կին փնտռէին:

Ըստ աշխարհագրի 1861 տարւոյ, քանի որ Չէրքէզք դեռ բոլորովին նուաճուած չէին՝ Քուպանի կուսակալութիւնը որ կը բովանդակէր Չէրքէզաց երկիրը, 513,000 բնակիչ ունէր 1863էն ե-

ան՝ յետ տարագրութեան Չէրքէզաց՝ Ռուս գաղթականք եկան հոն, և թէ ա-սոնց թէ հին մնացեալ ազգաց բոլոր թիւն 220,000ի կը հասնէր. այսպէս.

Ռուսք	100000
Նողայիք	4500
Գարաչայի	17000
Ապազա	5000
Նագուխա	26700
Պշէտուխք	20000
Քաբարտա	6500
Ապազեկք	8000
Շափսուդք	13000
Հայք	5000
Այլ և այլ ցեղք Չէրքէզաց	12000

Այս թուոյս մէջ եղող մերազգի գաղթականք շատոնց մտեր և մնացեր էին Չէրքէզաց մէջ, անշուշտ գերութեամբ, ուր և լեզունին և բարքերնին ալ քիչ շատ կորսընցընելով՝ դեռ իրենց կրօնքն և ազգութիւնը պահած էին, թէպէտ և շատ տարիներ քահանայէ ալ զուրկ մնալով. 1837ին Ռուսաց Զար զօրապետը հանեց զանոնք՝ 800 տուն՝ Չէրքէզաց միջէն, և Քուպանի վարի կողմերը բնակեցուց, ուր և շինեցին Նոր Արմաւիր քաղաքը։ Հիմայ յիշուած 5000 Հայքն ալ ասոնք պիտի ըլլան, գոնէ մեծաւ մասամբ։

ԱՌԱԿ

Արեգակն խօսնայր և գորտք.

Ի հարսանիս բրոնաւորին,
Մինչ ընդ գինիս մրտեալ ռամկին,
Ուրախանայր յերգ եւ ի պար,
Զայս՝ Եսովպոսն յոգնահանճար
Առակ՝ պատշաճ յայն ի դէպ
Նոցա էարկ առ ի վէպ։—
Նոր հաստատեալ զաստեղց ջուիր
Զվերին կամար եւ ծովուն ծիր,
Ապա խորհէր երկնիցն արքայ,
— Արեւ՝ եւ ոչ զայլ ոք իմա,—
Ըստ օրինի հասարակաց
Ածել իւր կին զոք յաստեղաց։
Անտուստ հապ ճեպ ջոջ ծեր գորտեր՝
Բարձեալ ըզգլուխ ընդ ջուրս ի վեր,
Առ Արամազդ Ամպրոպայոյզ,
— « Եթէ ի քեզ կայցէ գէթ դոյզն
» Առ քո, ասեն, գութ՝ արարածս,
» Շրջեա՛ զարեւդ զայդ ի մրտաց։
» Ըզմին եւեթ հազիւ հաղ,
» Խարշեալք, տապեալք հանապազ,
» Ցանիմք՝ ճրգնեալ զյետին ճիգն.
» Եւ այն չիցէ մեզ հերիք։